ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԽՈՍՔ ՀԱՇԻԵ ՋՆԴԻԻ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*

Հայ ժողովրդական առածն ասում է. «Մարդուն լավ ճանաչելու համար պետք է հետը նրկար Հանապարհ անցնես»։ Հաշիե Ջնդիի հետ մենք երեք տասնամյակ քայլել ենք աշխատանքային նույն ուղիով։ 1930-ական թվականների սկզբներին միասին մասնակցել ենք Կ. Մելիք-Օհանջանյանի գլխավորած բանագիտական խմբարշավներին, շրջել Հայաստանի բազմաթիվ գյուղերում, գրի առել բանահյուսական շատ նյութեր։ 25 տարի մենք համատեղ պաշտոնավարել ենք Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, լեզվի և գրականության, Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների բանահյուսության բաժիններում։ Նա զբաղվում էր քրդական, իսկ ես հայ բանահյուսության նյութերի դրառման և ուսումնասիրման գործով։ 1959 թվականից, թեև աշխատում ենք տարբեր հիմնարկներում, սակայն վաղեմի մեր բարեկամությունը շարունակվում է առ այսօր։ Պարբերաբար հանդիպումներ ենք ունենում, ծանոթացնում իրար մեր ընթացիկ կյանքին ու աշխատանքին։

Հաշիե Ջնդիի՝ իբրև քրդական ժողովրդական բանարվեստի երդվյալ նվիրյալի մասին ես շատ բան կարող էի ասել, մոտիկից ծանոթ լինելով նրա կատարած մեծ գործին։ Սակայն, տվյալ դեպքում, դրա անհրաժեշտությունը չկա։ Իր հրատարակած բազմաթիվ գրքերով (քրդերեն, հայերեն և ռուսերեն) նա վաղուց ճանաչված դեմք է ոչ միայն Հայաստանում, Սովետական Միության ուրիշ հանրապետություններում, այլև մեր երկրի սահմաններից դուրս։ Պատահական չէր, որ Իրաքի հանրապետությունում հիմնադրված Քրդական ակադեմիան տարիներ առաջ չհապաղեց նրան ընտրել իր թղթակից անդամ։ Առանձնապես արժեքավոր են Հաշիե Ջնդիի «Քրդական ֆոլկլոր» (1936), «Մամե ու Զինե» (1962), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (1964, 1969), «Ռոստամ-Զալ էպոսի քրդական պատումները» (1977) խորագրերով գրքերը և, հատկապես, հրատարակության պատրաստ քրդական ժողովրդական առածների ու ասացվածքների ծավալուն համահավաք ժողովածուն, որը մեր խորին համոզմամբ հանդիսանում է հեղինակի գլուխգործոցը։

---

* Ս. թ. մարտի 30-ին ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի գրողների միության համատեղ հանդիսավոր նիստում նշվեց գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, գրող Հաշիե Ջնդիի ծննդյան 70-ամյակը։ Ստորև տպագրում ենք ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղանալանյանի՝ այդ նիստում ունեցած ելույթը։

Հաչիե Ջնդիի հիշված և չհիշված մյուս գործերը ժամանակի հոլովումով չեն կորցնելու իրենց նշանակությունը։ Ռադիոյի, հեռուստատեսության և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մեր դարում այդ գործերը գնալով ավելի ու ավելի են գնահատվելու իբրև քուրդ ժողովրդի ապանկրկնելի մանկության գեղարվեստական հիասքանչ հուշամատյաններ։

Ազնվությունը, բարությունը, համեստությունը, խոհեմությունը, երախտագիտությունը, շիտակությունը Հաչիե Ջնդիի անհատականության անկապտելի բաղադրիչներն են։ Մարդու համար այնքան անհրաժեշտ այդ հատկությունները նրան շնորհել է ինքը՝ մայր բնությունը, որոնք նա աչքի լույսի պես պահել ու պահպանել է իր կյանքի ոչ միշտ դյուրին ու հարթ ճանապարհին։

Հաչիե Ջնդին երբեք չփորձեց ուրիշի հաշվին ուղի հարթել իր համար։ Ընդհակառակը, նա սեփական ուժերի ներածին չափ միշտ ձգտեց օգտակար լինել մարդկանց, նրանց հետ կիսեց ազնիվ տքնությամբ ձեռք բերած իր կենսափորձն ու իմացությունները։ Միշին և կրտսեր սերնդի այսօրվա քուրդ բանագետների (և ո՛չ միայն բանագետների) զգալի մասը, ժողովրդական արտահայտությամբ ասած, մարդ է դարձել նրա անմիջական օժանդակությամբ և խնամոտ հոգածությամբ։

Քուրդ ժողովրդի երախտաշատ բանագետին, ազնիվ մարդուն, իմ լավ բարեկամին ու գրչակից ընկերոջը, իր ծննդյան 70-ամյակի առթիվ ցանկանում եմ՝ առողջություն, եռանդ և բեղմնավոր աշխատանքի շատ տարիներ։